



Ա. ԵՐԵՄՅԱՆ

ԵՐԱԺԵՏԱՊԵՏ ՍՆԱՐՎԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ

13-րդ դար

(Էջեր հնագույն հայ երաժշտության պատմությունից)



Իջնադարյան հայ երաժշտական մշակույթի արվեստագետների շարքում իր պատվավոր տեղն ունի մի վաստակավոր երաժշտապետ: Դա Սամվել վարդապետն է, որի երաժշտական գործունեության պատմության էջերը մեզ տանում են 13-րդ դարի կեսը:

Նա հանդիսանում է իր դարաշրջանի հոգևոր եկեղեցական երաժշտության զարկ տվող լավագույն դրոշակակիրներից մեկը: Դա այն պատմաշրջանն էր, երբ Կիլիկիայում փայլում էին Դրազարկի դպրոցի երաժշտապետներ Հովսեփը (1241 թ.), Երաժիշտ Թորոսը (13-րդ դարի վերջին և 14-րդ դարի առաջին շրջանում), երաժշտապետ Կրիզոստոմը (1247 թ.) և ուրիշներ, որոնք ծավալում են երաժշտական բազմակողմանի գործունեություն և նպաստում իրենց դարաշրջանի հայ ժողովրդի գեղարվեստական ճաշակի զարգացմանը:

Ահա նույն 13-րդ դարի կեսում նկարվում է երաժշտապետ Սամվելի կերպարը, որ իբրև երաժշտության դասատու աշխատում է Ձորո բերդում և ամբողջ էությունը նվիրվում է հայկական երաժշտական մշակույթի զարգացման գործին:

Այս արժեքավոր երաժշտապետի անունը 704 երկար տարիներ իր մի էջում գուրգուրանքով պահել է հնագույն մի ձեռագիր, որի ձևատիպ կարգում ենք՝ «Մեկնութիւն կարողիկեայց» խորագիրը:

Դա գրված է թղթի վրա, բուրբուրով, հայոց Ողթ (1250) թվականին, Ձորո բերդում, «մեղաւոր և յետին գրչի»՝ Ստեփանոսի ձեռքով: Ձեռագրի հիշատակարանը հայ երաժշտու-

թյան պատմության համար առանձին արժեք է ներկայացնում նրանով, որ այնտեղ երաժշտապետ Սամվել վարդապետի մասին կարդում ենք թեև շատ սեղմ, բայց այսպիսի թանկագին տողեր. «...Գրեցաւ ոգեշահ դիրս ձեռամբ մեղաւոր և յետին գրչի Ստեփանոսի» յանապատիս, որ կոչի Ձորոյ բերդ: Նւ արդ, աղաչեմ հողացեալ բերանով... յիշեսցիք և զյառաջասացեալ վերայկացուք անապատիս և զհողմոր հայրն և դբարի վարդապետ իմ զՍամուել երաժշտապետն և մակացու յաստուածայինսն... գրեցաւ... ի հայրապետութեան Տեառն Կոստանդնուպոլսի և ի թագաւորութեանս հայոց քրիստոսապասկ թագաւորին Հեթմոյ և աստուածաւէր թագուհոյն Զապելի, որ է դուստր Լևոնի թագաւորին...»:

Ձորաբերդի պատմական վանքը լինելով հայ ժողովրդի հոգևոր մի կենտրոնը, միաժամանակ հանդիսանում է հայկական մշակույթի կարևոր օջախներից մեկը: Այնտեղ բեղմնավոր աշխատանք են ծավալում վաստակավոր գրիչներն ու նկարիչները, որոնք հայ գրչական և մանրանկարչական մշակույթի զարգացման գծով խոշոր դեր են կատարում: Դեռ 1310 թվականին հանդես է գալիս Իգնատիոս գրիչը և գրում է մի «Շարակնոց», որի հիշատակարանում նա ընդգծում է հետևյալ էական տողերը. «...Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուիս ՉՄԹ (1310), ձեռամբ անպիտան և անարժան քահանայի Իգնատիոսի, ի մեծաստանի, որ կոչի Ձորոյ վանք, ընդ հովանեաւ Սրբուհոյ Աստուածածնիս... որք աւստիք ի սմանէ ուս-

1. Տե՛ս Գրեգին Ա. Կաթողիկոսի «Յիշատակարանը ձեռագրաց», Անթիլիաս, 1951 թ.:

մամբ կամ գաղափարաւ, սրտի մտաւք յիշեցնէր զգծաւդ սորա զիգնատիոս և զազգայինսն մեր, և Աստուած յիշողացդ ողորմեսցի ի միւս անգամ գալուստն, ամէն»։

Զորոյ վանքի պարծանքն է կազմում նաև Կոստանդին գրիչը, ուր նա ընդօրինակում է «Յայամատուրք»ի մի մասը։

Նշանավոր Զորո վանքի կամարների ներքո ստեղծվում է մի այլ գեղագետ գրիչ։ Դա Առաքելն է, որ 1338 թվականին գրում է «Մանրուամունք» ձեռագիրը։ Ահա՛ գրչագրի վկայությունը. «...Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի մանրուամուն և առնթեր կցուող փոխման Աստուածածնի, ի թուին 92 է (1338), ի թագասորութեան Հայոց Լեոնի, որդւոյ արքային Աւշին, և ի հայրապետութեան Տեառն Յակոբաւ, որ կոչի Զորոյ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և կենսաբեր սուրբ նշանիս, ձեռամբ բազմամեղ, եղկելի և անիմաստ գրչի Առաքելին»։

Պատմական մենաստանում ստեղծվում են նաև բարենպաստ պայմաններ հայ երաժշտության զարգացման համար։ Այնտեղ վաստակավոր գրիչները ո՛չ միայն գրում են «Շարակնոց», «Մանրուամունք» և հարգատեղում հայ երաժշտական արվեստի էջերը, այլև հանդես է գալիս գեղարվեստագետ Սամվել վարդապետը և իր մասնագիտական լուրջ կրթությամբ փայլում է որպես հմուտ ու ձևակերպված երաժշտագետ, հոգևոր երգիչ՝ ձայնագրող և Զորո վանքի մշակութային գործիչ։

Նա մենաստանում, իբրև երաժշտության դասատու, առանձին ուղադրություն է դարձնում նոր սերնդի գեղարվեստական դաս-

տիարակության վրա։ Իր շուրջն է համախմբում երաժշտական ընդունակությամբ օժտված միաբաններին, որպեսզի նրանք ձեռք բերեն անհրաժեշտ գիտելիքները և նվիրվեն ժողովրդի մեջ երաժշտություն տարածելու վեհ գործին։

Սակայն «բարի վարդապետ Սամվել երաժշտագետը» իր հասարակական գործունեությունը չի սահմանափակում միայն մանկավարժական աշխատանքով։ Նվիրվում է նաև ստեղծագործական-երգահանական արվեստին և իր հորինած երգերով հարստացնում դարաշրջանի հայ եկեղեցական երաժշտության դանձարանը։

Առհասարակ, որպես հայ երաժշտական մշակույթի զարգացման նախաձեռնողի արվեստագետ, նա առաջիններից մեկն է, որ Զորո վանքում ո՛չ միայն միշտ բարձր է պահում հայ երաժշտական արվեստի դրոշմը, այլև երաժշտական կրթություն է տալիս վանքի ընդունակ հրիտասարդ միաբաններին և նրանց սրտերում վառ պահում երաժշտական մշակույթի տերը։ Նույնպես նա է, որ իր միջավայրում տարածում է հոգևոր սքանչելի երգեր, որոնք խոր տպավորություն ան գործում ժողովրդի վրա և նպաստում նրա երաժշտական դաստիարակությանը։

Այդ բեղմնավոր աշխատանքների շնորհիվ էլ Սամվել երաժշտագետն արժանանում է մենաստանի միաբանների հատուկ տշադրությանը և վայելում ժողովրդի սերն ու համակրանքը։

Ահա թե ինչո՞ւ նրա կատարած բազմերանգ գերը հայ երաժշտության պատմության մեջ խոշոր նշանակություն ունի։

